ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան «17» օգոստոսի, 2023 թ.

ՀՐԱՄԱՆ № 22-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ (DEMAND DRIVEN) ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԻՑ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15.1-ին հոդվածի 2-րդ մասի 11)-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 7-ի N 20-Լ հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 8-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում պետության պահանջարկի վրա հիմնված (demand driven) հետազոտական նախագծերի հայտերի ընտրության մրցույթի գիտական թեմաները սահմանելու նպատակով ստեղծել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի նախագահին կից ոլորտային աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելված N 1-ի և աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԳԿ նախագահի
«17» օգոստոսի, 2023 թ.
N 22-Ա/Ք հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ (DEMAND DRIVEN) ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Հ/հ	Անուն Ազգանուն	Պաշտոն
		Առողջապահության ոլորտ
1.	Գայանե Մելիք-Անդրեասյան	ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ռեֆերենս լաբորատոր կենտրոնի տնօրենի տեղակալ
2.	Սամսոն Խաչատրյան	ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի գիտական ծրագրերի գծով փոխտնօրեն
3.	Ալբերտ Սահակյան	ՀՀ ԱՆ ակադելիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի տնօրենի խորհրդական
4.	Կոնստանտին Ենկոյան	Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր
5.	Նաիրա Այվազյան	ՀՀ ԳԱԱ Լ. Ա. Օրբելու անվան ֆիզոլոգիայի ինստիտուտի տնօրեն
6.	Արսեն Առաքելյան	ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն
7.	Նարինե Ղազարյան	ՀՀ ԱՆ պրոֆ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնի գիտական գծով փոխտնօրեն
		Ինֆորմացիոն և բարձր տեխնոլոգիաների ոլորտ
8.	Կարեն Սիմոնյան	ՀՀ ԲՏԱՆ միջազգային համագործակցության վարչության պետ
9.	Տաթևիկ Սողոմոնյան	ՀՀ ԲՏԱՆ շուկայի զարգացման վարչության պետ
10.	Արարատ Սահակյան	ՀՀ ԲՏԱՆ շուկայի զարգացման վարչության շուկայի հետազոտության բաժնի պետ
11.	Անդրանիկ Սարգսյան	ՀՀ ԲՏԱՆ գիտատեխնիկական վարչության պետի տեղակալ
12.	Նուշիկ Պետրոսյան	ՀՀ ԲՏԱՆ թվայնացման վարչության գլխավոր մասնագետ
13.	Հրանտ Խաչատրյան	ԵՊՀ մաթեմատիկայի և կիրառական հետազոտությունների կենտրոնի մեքենայական ուսուցման խմբի ղեկավար, «ԵՐԵՎԱՆԷՆ» գիտակրթական հիմնադրամի տնօրեն

14.	Մուշեղ Ռաֆայելյան	ԵՊՀ ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի ֆոտոնիկայի և արհեստական բանականության գիտահետազոտական լաբորատորիայի ղեկավար
15.	Արամ Պապոյան	ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն
16.	Գևորգ Քառյան	Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտի) տնօրեն
17.	Տիգրան Զաքարյան	ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն
18.	Ամալյա Մխիթարյան	ՀԱՊՀ Հայաստանի ազգային ճարտարագիտական լաբորատորիաների (ANEL) համակարգող
19.	Բագրատ Գրիգորյան	«Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի տնօրեն
20.	Հրաչ Ասցատրյան	ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն

Տնտեսության և գյուղատնտեսության ոլորտ

21.	Էդգար Հակոբյան	ՀՀ ԷՆ գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչության պետ
22.	Վարսիկ Մարտիրոսյան	ՀՀ ԷՆ բուսաբուծության վարչության պետ
23.	Ռիմա Կարապետյան	ՀՀ ԷՆ սննդամթերքի անվտանգության վարչության բուսասանիտարիայի բաժնի պետ
24.	Համլետ Մկրտչյան	ՀՀ ԷՆ գիտելիքահենք տնտեսության վարչության փորձագետ
25.	Վահագն Մարգարյան	ՀՀ ԷՆ գյուղատնտեսական ծառայությունների կենտրոնի բուսասանիտարիայի բաժնի պետ
26.	Սարգիս Մանուկյան	ՀՀ ԷՆ ռազմավարական ոլորտների վարչության ծանր արդյունաբերության բաժնի պետ
27.	Վարդան Ուռուտյան	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր
28.	Ավետիս Ծատուրյան	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրեն
29.	Սեյրան Մինասյան	ՀՀ ԳԱԱ Ա. Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն
30.	Ռոբերտ Հակոբյան	ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի գիտական գծով փոխտնօրեն
31.	Հայկ Բեգլարյան	ՀՀ ԳԱԱ Մ. Գ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի հիմնային ապարներից կիրառական նյութերի ստացման և ուսումնասիրության խմբի ղեկավար
32.	Կարեն Թռչունյան	ԵՊՀ կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի ղեկավար
33.	Արթուր Ալթունյան	ՀԱԱՀ գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրաֆիկացման և ավտոմոբիլային փոխադրումների գիտահետազոտական ինստիտուտի դաշտավարության և անասնապահության մեքենայացման բաժնի ղեկավար

	Բնապահպանության ոլորտ	
34.	Լուսինե Ավետիսյան	ՀՀ ՇՄՆ ռազմավարական քաղաքականության վարչության պետ
35.	Արթուր Պետրոսյան	ՀՀ ՇՄՆ անտառային քաղաքականության վարչության պետ
36.	Ոսկեհատ Գրիգորյան	ՀՀ ՇՄՆ բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության պետ
37.	Լիլիթ Աբրհամյան	ՀՀ ՇՄՆ ջրային քաղաքականության վարչության պետ
38.	Սևակ Բալոյան	ՀՀ ՇՄՆ կենսառեսուրսների կառավարման վարչության պետ
39.	Լիլիթ Ավետիսյան	ՀՀ ՇՄՆ անտառային կոմիտեի անտառների հաշվառման և կադաստրի վարման վարչության պետ
40.	Արսեն Գասպարյան	ՀՀ ԳԱԱ Ա. Լ. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրեն
41.	Սարգիս Աղայան	ՀՀ ԳԱԱ կենսաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն
42.	Լիլիթ Սահակյան	ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն
43.	Դավիթ Պիպոյան	ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդային շղթայի ռիսկի տեղեկատվության և վերլուծության գնահատման կենտրոնի ղեկավար
	Տարածքային կառավարման ոլորտ	
44.	Ռուզաննա Այվազյան	ՀՀ ՏԿԵՆ ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ
45.	Մարինե Հովհաննիսյան	ՀՀ ՏԿԵՆ էներգետիկայի վարչության էներգետիկ ենթակառուցվածքների բաժնի պետ
46.	Սուրեն Մամյան	ՀՀ ՏԿԵՆ ընդերքի վարչության ընդերքաբանական փորձաքննության բաժնի պետ
47.	Վահան Պոտոսյան	ՀՀ ՏԿԵՆ տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության կոշտ կենցաղային թափոնների կառավարման բաժնի գլխավոր մասնագետ
48.	Աննա Մարգարյան	ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչության պետ
49.	Խաչատուր Մելիքսեթյան	ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն
50.	Արմինե Ավետիսյան	ՀԱՊՀ գիտական հետազոտությունների և ինովացիոն մշակումների կենտրոնի տնօրեն
51.	Եղիազար Վարդանյան	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր

Հավելված N2
ՀՀ ԳԿ նախագահի
«17» օգոստոսի, 2023 թ.
N 22-Ա/Ք հրամանի

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ (DEMAND DRIVEN) ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպող պետության պահանջարկի վրա հիմնված հետազոտական նախագծերի հայտերի ընտրության մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) գիտական թեմաների վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու նպատակով ստեղծված Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահին (այսուհետ՝ Նախագահ) կից աշխատանքային խումբը (այսուհետ՝ Խումբ) հասարակական հիմունքներով գործող մարմին է:

II. ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. Խմբի անհատական կազմը հաստատում է Նախագահը:

3. Խումբն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են Մրցույթից առաջ՝ ըստ անհրաժեշտության:

4. Խմբի նիստերը նախագահում և վարում է Նախագահը, կամ նրա հանձնարարությամբ՝ Նախագահի տեղակալը:

5. Խմբի նիստերին կարող են մասնակցել Կոմիտեի քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող աշխատակիցներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ պետական մարմիններից հրավիրված ներկայացուցիչներ:

6. Խմբի նիստերը դռնբաց են: Նախագահողի առաջարկությամբ Խումբը ձայների պարզ մեծամասնությամբ կարող է որոշել առանձին հարցեր քննարկել դռնփակ:

III. ԽՄԲԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

7. Խմբի նիստերն անցկացվում են նախագահողի կողմից հաստատված օրակարգով:

8. Խմբի նիստի օրակարգում նշվում են՝

1) նիստի անցկացման օրը և ժամը.

2) քննարկման ենթակա հարցերը.

3) նիստը նախագահողի անունը, ազգանունը և պաշտոնը:

9. Խմբի նիստերի անցկացման և դրանց ընթացքում քննարկվելիք հարցերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը նախապես փոխանցվում է Խմբի անդամներին:

IV. ԽՄԲԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆՎՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

10. Խմբի հիմնական խնդիրներն են՝

1) քննարկել և վեր հանել Հայաստանի Հանրապետության տնտեսության, գյուղատնտեսության, առողջապահության, բնապահպանության և այլ ոլորտների խնդիրները, որոնց ուղղությամբ գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական աշխատանքները և փորձարարական մշակումները կարող են նպաստել տվյալ խնդիրների լուծմանը և կոնկրետ ոլորտի զարգացմանը.

2) ուսումնասիրել առկա խնդիրների լուծման ուղղությամբ առաջատար երկրների հաջողված փորձերը և դրանց տեղայնացման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ.

3) քննարկել առկա խնդիրների լուծման արդիականությունը, հրատապությունը, առաջնահերթությունը, ոլորտի զարգացման վրա հնարավոր ազդեցությունը և այլ հարցեր.

4) վերլուծել գիտություն – արտադրություն, գիտություն – տնտեսություն կապերի զարգացմանը նպաստելու հնարավորությունները՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից համակարգվող ոլորտներում եղած խնդիրները և Հայաստանի Հանրապետության գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի գիտական ներուժը:

11. Քննարկումների արդյունքում Խումբը սահմանում է կոնկրետ խնդիրներ՝ ըստ ոլորտների և դրանք ներկայացնում Նախագահին:

12. Խումբը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ կարող է ընդունել խորհրդատվական բնույթի որոշումներ:

V. ԽՄԲԻ ՆԻՍՏՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԵՎ ԽՄԲԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

13. Խմբի նիստերն արձանագրում է նիստի քարտուղարը:

14. Քարտուղար է նշանակվում Կոմիտեի քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող աշխատակից:

15. Անհրաժեշտության դեպքում կարող են ստեղծվել ոլորտային ենթախմբեր:

16. Նիստի արձանագրության մեջ նշվում է նիստի անցկացման օրը, մասնակցող Խմբի անդամների և հրավիրված անձանց տվյալները, քննարկվող հարցերի և ելույթների հիմնական դրույթները, ընդունված որոշումները և անհրաժեշտ այլ տեղեկություններ:

17. Նիստի արձանագրությանը կցվում են քննարկված հարցերին վերաբերող նյութեր, ինչպես նաև քննարկված հարցի և կայացված որոշման առնչությամբ Խմբի անդամների հատուկ կարծիքները (գրավոր ներկայացված լինելու դեպքում):

18. Խմբի նիստի արձանագրությունը ստորագրում Է նիստը նախագահողը:

19. Ծանուցումները և տեղեկատվության փոխանակումը կատարվում է էլեկտրոնային եղանակով: